«Երաժշտություն հանուն ապագայի» 2021/2022թթ.
կրթաթոշակի տրամադրման

ԿԱՐԳ

ք. Երևան, ՀՀ «27» մայիսի, 2021թ.

Հիմնադիր՝
«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամ

Գեղարվեստական ղեկավար՝
Սերգեյ Սմբատյան

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) սահմանում է «Երաժշտություն հանուն ապագայի» տարեկան կրթաթոշակ (այսուհետ՝ Կրթաթոշակ) 10-17 տարեկան տաղանդավոր երիտասարդ երաժիշտների համար՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

- ջութակ
- ալտ
- թավջութակ
- ֆլեյտա
- հոբոյ
- կլարնետ
- ֆագոտ
- գալարափող
- շեփոր
- տրոմբոն
- հարվածային գործիքներ
- դաշնամուր
- տավիղ

2. Կրթաթոշակի նպատակը

2.1. Կրթաթոշակի տրամադրման հիմնական նպատակներն են.

- Երաժշտական արվեստի քարոզչությունը ժամանակակից հասարակության մեջ:

- Խրախուսման կարիք ունեցող ամենատաղանդավոր երեխաների բացահայտումը:
- Դասական երաժշտության ոլորտի երիտասարդ սերնդի երաժիշտների խթանումը և նրանց զարգացման հնարավորության տրամադրումը:

3. Կրթաթոշակի ստացման փուլերը

3.1. Կրթաթոշակի ստացման փուլերն են.

- դիմում-հայտի, անհրաժեշտ փաստաթղթերի և տեսաձայնագրության ուղարկում,
- տեսաձայնագրությունների ունկնդրում միջազգային ժյուրիի կողմից,
- հարցազրույց Հիմնադրամի տնօրենի հետ,
- արդյունքների ամփոփում,
- պայմանագրերի կնքում,
- ընտրված կրթաթոշակառուների խրախուսում:

4. Կրթաթոշակին դիմելու պահանջներն ու պայմանները

4.1. Կրթաթոշակին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

- դիմորդի Օրինական ներկայացուցչի՝ ծնողի կամ խնամակալի (այսուհետ՝ Օրինական ներկայացուցիչ) կողմից լրացված դիմում-հայտ (Հավելված 1),
- դիմորդի կողմից ներկայացվող ծրագրի տեսաձայնագրություն (վիդեոձայնագրություն),
- տեղեկանք-երաշխավորագիր դիմորդի երաժշտական հաստատությունից,
- դիմորդի ծննդյան վկայականի պատճեն կամ անձնագիր ունենալու դեպքում՝ անձնագրի պատճեն (գլխավոր և ծնողների/ծնողի մասին նշումով էջեր),
- դիմորդի փաստացի բնակության վայրի (ոչ հաշվառման վայրի) մասին տեղեկանք,
- դիմորդի Օրինական ներկայացուցչի դրամային բանկային հաշվի առկայության մասին տեղեկանք բանկից (ոչ քաղվածք, ոչ մնացորդ, այլ՝ դրամային բանկային հաշվի ռեկվիզիտների մասին տեղեկանք) (այն հաշվեհամարի, որին դիմորդի՝ կրթաթոշակառու դառնալու դեպքում կփոխանցվի կրթաթոշակը):

4.2. Վերոնշյալ փաստաթղթերը և դիմորդի տեսաձայնագրության հղումն անհրաժեշտ է 1 նամակով ուղարկել Հիմնադրամի **scholarship@m4f.foundation** էլեկտրոնային փոստի հասցեին: Ներկայացվող տեսաձայնագրությունը պետք է ուղարկել **YouTube-յան հղման** տեսքով, որը պետք է նշվի էլեկտրոնային նամակի տեքստի մեջ: Իսկ նամակի վերագիրը պետք է նշվի անգլերենով՝ հետևյալ կերպ՝ Application 2021 և դիմորդի անուն-ազգանունը (օրինակ՝ Application 2021 Petros Petrosyan):

4.3. Դիմում-հայտն անհրաժեշտ է լրացնել կա՛մ համակարգչով, կա՛մ տպված վիճակում՝ **ընթեռնելի տպատառերով (ոչ ձեռագրով)**: Երկու դեպքում էլ դիմում-հայտը լրացնելուց հետո անհրաժեշտ է այն **տպված վիճակում ստորագրել** և **ուղարկել ստորագրված և սկանավորված դիմում-հայտը** վերը նշված տարբերակով:

4.4. Դիմում-հայտի ներկայացումը վկայում է, որ դիմորդի Օրինական ներկայացուցիչը և դիմորդը.
- ծանոթացել են, համաձայն են և անվերապահորեն ընդունում են Կրթաթոշակի տրամադրման սույն կարգի բոլոր դրույթները,
- առանց առարկության ընդունում են ժյուրիի կողմից գրանցվելիք արդյունքները (կայացվելիք որոշումը),
- համաձայն են, որպեսզի կրթաթոշակային ծրագրի շրջանակներում դիմորդի մասնակցությամբ արված լուսանկարները, աուդիո նյութերը և տեսանյութերն օգտագործվեն և տարածվեն Հիմնադրամի կողմից,
- տալիս են իրենց համաձայնությունը Հիմնադրամին՝ իրենց կողմից տրամադրած անձնական տվյալների և տեղեկատվության՝ սույն կրթաթոշակային ծրագրի շրջանակներում մշակելու համար:
- պատասխանատու են իրենց ներկայացրած տեղեկատվության և տեսաձայնագրության ճշգրտության, հավաստիության և սույն կարգում նշված պահանջներին բավարարելու համար:

4.5. Կրթաթոշակին դիմելու համար դիմորդներին ներկայացվող պարտադիր պահանջներն են.

- Դիմորդը պետք է հանդիսանա ՀՀ քաղաքացի և բնակվի Հայաստանում:
- Դիմորդը պետք է լինի Հայաստանի երաժշտական կամ արվեստի դպրոցի կամ երաժշտական կամ արվեստի քոլեջի սան:
- Դիմորդի տարիքը դիմում-հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պետք է լինի 10-17 տարեկանը ներառյալ:

4.6. Ներկայացվող փաստաթղթերի և տեսաձայնագրության թերի լինելու, ինչպես նաև սույն կարգում նշված պայմաններին չբավարարելու դեպքում դիմորդների հայտերը ենթակա են մերժման, ինչի մասին դիմորդները նախապես կտեղեկացվեն:

5. Ժամանակացույց

5.1. Կրթաթոշակին դիմելու համար փաստաթղթերի և տեսաձայնագրության ընդունման ժամկետն է **մինչև 2021թ. հունիսի 17-ը ներառյալ**:
Մի՛ սպասեք վերջին օրերին կրթաթոշակին դիմելու համար:

5.2. Ստացված դիմում-հայտերի ամփոփումը և տեսաձայնագրությունների ունկնդրումները կկատարվեն բոլոր հայտերը ստանալուց հետո 1-ամսյա ժամկետում, որից հետո դիմորդները գրավոր կտեղեկացվեն ժյուրիի որոշման մասին:

5.3. Կրթաթոշակառուներին հայտարարելուց հետո նրանց Օրինական ներկայացուցիչների հետ 10 աշխատանքային օրվա ընթացքում կկնքվի պայմանագիր:

5.4. Հիմնադրամը կարող է վերանայել վերոնշյալ ժամանակացույցը՝ կախված ներկայացված հայտերի քանակից:

6. Ելույթի գնահատման չափորոշիչները

6.1. Գնահատման չափորոշիչներն են.

- Ընտրված ծրագրի համապատասխանությունը մասնակցության պահանջներին, մասնակցի տարիքային և անհատական առանձնահատկություններին:
- Ստեղծագործության/ների կատարողական մեկնաբանության գեղարվեստական արժանիքները:
- Կատարողի տեխնիկական հմտությունների մակարդակը:

7. Տեսաձայնագրություն

7.1. Տեսաձայնագրության ընթացքում դիմորդը պետք է հանդես գա մենանվագ ստեղծագործության կատարումով (որպես մենակատար) (թույլատրվում է նաև դաշնամուրի նվագակցությամբ) և իր ընտրությամբ **ազատ ծրագրով** (1 կամ մի քանի ստեղծագործություն),

որը պետք է կատարվի անգիր և որն իր կարծիքով լավագույնս կներկայացնի իրեն՝ որպես առաջադրված թեկնածուի:

7.2. Ներկայացվող ծրագրի տևողությունը պետք է լինի **առավելագույնը 15 րոպե:** Տեսաձայնագրությունը պետք է լինի **արդի** և պետք է արված լինի **ս./թ. մայիսի 27-ից սկսած**: Այն պետք է լինի **ամբողջական, չմոնտաժված, նկարահանված լինի 1 տեսախցիկով և լինի բարձր որակով (նվազագույնը՝ HD 720p որակով)**: Տեսաձայնագրությունը հեռախոսով կատարելու դեպքում տեսախցիկը պետք է պահվի հորիզոնական: Տեսագրության մեջ պետք է երևան մենակատարի գործիքն ամբողջությամբ (դաշնամուրի դեպքում՝ ստեղնաշարը), մենակատարի գլուխը, ձեռքերը և մատները:

7.3. Տեսաձայնագրության սկզբում դիմորդը նախ պետք է ներկայանա՝ նշելով իր **անուն-ազգանունը**, և նշի հետևյալը. **«Տեսաձայնագրությունն արվում է «Երաժշտություն հանուն ապագայի» կրթաթոշակին դիմելու համար»**: Եթե դիմորդը հանդես է գալիս մի քանի ստեղծագործությամբ, ապա թույլատրվում է նաև յուրաքանչյուր ստեղծագործության համար ներկայացնել առանձին YouTube-յան հղում, սակայն այս դեպքում ամեն տեսաձայնագրության սկզբում դիմորդը պետք է ներկայանա վերոնշյալ ձևով, և բոլոր ներկայացված ստեղծագործությունների գումարային տևողությունը չպետք է գերազանցի 15 րոպեն: Նաև, յուրաքանչյուր տեսաձայնագրությունը պետք է բավարարի վերոնշյալ կետերում նշված պայմաններին: Չի թույլատրվում ներկայացնել դիմորդի համերգից արված տեսաձայնագրություն:

7.4. YouTube-յան տեսաձայնագրությունը պետք է անվանել հետևյալ կերպ (անգլերենով)՝ դիմորդի անուն և ազգանուն-Գործիք-M4FF (օրինակ՝ Petros Petrosyan-Piano-M4FF), իսկ տեղադրված տեսաձայնագրության նկարագրության մեջ պետք է նշել կատարվող ստեղծագործության/ների ցանկը:

8. Ժյուրի

8.1. Դիմորդների տեսաձայնագրությունները լսելու են միջազգային ժյուրիի ներկայացուցիչներ:

8.2. Ժյուրիի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

9. Արդյունքների ամփոփում և կրթաթոշակառուների խրախուսում

9.1. Արդյունքների ամփոփումից հետո ընտրված լավագույն կրթաթոշակառուների Օրինական ներկայացուցիչների հետ կնքվելու է կրթաթոշակառուի խրախուսման (աջակցության) պայմանագիր 1 տարի ժամկետով:

9.2. Կրթաթոշակառուի համար նախատեսվում են խրախուսման հետևյալ միջոցները.

- ***Դրամական խրախուսում***
  Յուրաքանչյուր կրթաթոշակառուի համար Հիմնադրամը տվյալ տարվա ընթացքում ամսական 100 (մեկ հարյուր) եվրոյին համարժեք ՀՀ դրամ (պայմանագրի ստորագրման օրվան համապատասխան փոխարժեքով) կրթաթոշակ է փոխանցելու կրթաթոշակառուի Օրինական ներկայացուցչի բանկային հաշվեհամարին:

- ***ՀՀ-ից դուրս կրթաթոշակառուներին տրամադրվող խրախուսում***
  Յուրաքանչյուր կրթաթոշակառու հնարավորություն է ունենալու տվյալ տարվա ընթացքում մեկ անգամ ներկա գտնվել աշխարհահռչակ արտիստների և դասախոսների վարպետության դասին:
  Հիմնադրամը հոգալու է կրթաթոշակառուի ծախսերը վարպետության դասին մասնակցելու համար՝ ավիատոմս, ՀՀ-ից դուրս կեցության, սննդի ծախսեր և վարպետության դասի արժեք:

- ***Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կողմից կրթաթոշակառուներին տրամադրվող խրախուսում***
  Յուրաքանչյուր կրթաթոշակառու հնարավորություն է ունենալու տվյալ տարվա ընթացքում ներկա գտնվել.
  - Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կազմակերպած հայաստանյան բոլոր համերգներին անվճար (յուրաքանչյուր համերգի համար Հիմնադրամի կողմից 2 անվճար տոմսի տրամադրում կրթաթոշակառուին):
  - Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հյուրընկալած արտիստների ու երաժիշտների հայաստանյան վարպետության դասերին անվճար:
  - Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի փորձերին:

10. Կրթաթոշակառուների համերգներ

10.1. Կրթաթոշակառու լինելու ընթացքում կրթաթոշակառուները հանդես են գալու համերգային ելույթներով: